

Հարություն Վանյան
ԵՊՀ պատմության ֆակուլտետ, մագ. 2-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ պ. գ. ք. Ա. Բորոխյան
Էլ. փոստ՝ Harut26@inbox.ru

ՀԱՆՈՒՄՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՍՈՑԻՈՒ

Սկսած 2010 թ. հայ-գերմանական արշավախումբը՝ ներկայացված մի կողմից Հնագիտության և ազգագրության ու Երկրաբանական գիտությունների ինստիտուտներով, իսկ մյուս կողմից՝ Հալեի ու Թյուբինգենի համալսարաններով, հնագիտական և երկրաբանական հետազոտություններ է իրականացնում Սոթքի ոսկու հանքերին հարակից տարածքում: Ծրագրի նպատակն է ստուգել հանքի՝ հնագույն շրջանում հնարավոր շահագործման ներուժը՝ այն դիտարկելով ենթատարածքի սոցիո-մշակութային զարգացումների համատեքստում: Արշավախմբի հնագիտական աշխատանքները երկու մասից են բաղկացած՝ հետախուզություն և պեղումներ: Արդյունքում, երկու տարվա ընթացքում, հայտնաբերվել են ավելի քան 20 նոր հուշարձաններ:

Մեր հետազոտությունների կոնկրետ առանցքը ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճից հարավ-արևելք գտնվող Սոթքի հանքարդյունաբերական շրջանն է: Առաջին հերթին, սա ամենամեծ ոսկու հանքն է Մերձավոր Արևելքում: Երկրորդ, այն արդեն ցույց է տվել, որ ամենայն հավանականությամբ շահագործվել է հնագույն ժամանակներում: Երրորդ, այն ունի շատ կարևոր աշխարհագրական դիրք. տեղադրված լինելով Սոթքի լեռնանցքին կից՝ այն միացնում է Արևելյան և Հարավային Կովկասը ու պետք է ռազմավարական նշանակություն ունենար հնում: Եվ վերջապես, այն շատ կարևոր շրջան է հնագիտական ուսումնասիրությունների համար՝ ոչ միայն այն պատճառով, որ հարուստ է հնագիտական հուշարձաններով, այլ նաև այն պատճառով, որ տարածաշրջանը (որի մեջ մենք ներառում ենք նաև շրջկենտրոն Վարդենիսը իր ամբողջ շրջակայքով) դեռևս մնում է վատ ուսումնասիրված: Նման հնագիտական հուշարձաններից մեկը Սոթք 2 բնակավայրն է, որտեղ և նախնական պեղումներ են իրականացվել: Սույն հաղորդման նպատակն է ներկայացնել Սոթք 2-ի պեղումների հիմնական արդյունքները:

Սոթք 2 բնակավայրը գտնվում է Սոթք գյուղի արևելյան հատվածում՝ Սոթքի ոսկու հանքերը և անցումը տանող ճանապարհին: Բարձր. 2101 մ է: Այն բնական, ձվաձև բլուր է, բաղկացած հարթ վերնամասից, թեք և դարավանդաձև իջնող ստորոտներից: Ստ 4,5 հա է (պաշտպանված վերնամասը մոտ 0,5 հա): Սոթք 2-ը ունի յուրահատուկ ռազմավարական դիրք՝ գտնվելով դեպի Սոթքի ոսկու հանքերը և հարավային ու արևելյան Կովկասը միացնող Սոթքի անցումը տանող ճանապարհի վրա: Այս դիրքը հնարավորություն է տալիս վերահսկել ողջ տարածաշրջանը. մասնավորապես բլրի տեսողաշտում են գտնվում արևմուտքում՝ մինչև Սևանա լիճ ընկած տարածքը, հյուսիս-արևմուտքում՝ մինչև կարևոր նշանակություն ունեցող Գեղամասար բնակավայրը, հարավ-արևմուտքում՝ մինչև մի շարք ժամանակակից և նմանապես կարևոր բնակավայրեր, ինչպիսիք են 2011 թ. հայտնաբերված Սոթք 7-ը և արդեն հայտնի Նորաբակ 1-ը: Բլուր այս բնակավայրերը կազմում են մի տրամաբանական շարք, որոնց միջոցով վերահսկվում է հիշյալ ճանապարհը:

Այն բլուրը, որի վրա գտնվում է Սոթք 2-ը, տեղացիների կողմից անվանվում է «Դար»: Խորհրդային հին քարտեզների վրա բլուրն անվանված է «Հինգ քար», ինչը վերաբերում է բլրի հարավային մասում լավ տեսանելի պաշտպանական համակարգի հինգ ամենամեծ քարերին: Մինչև XX դ. վերջերը բլուրը, փաստորեն, հնագետներ-

րին անհայտ էր: Միայն 1990-ական թթ. վերջին հայ-իտալական արշավախումբը¹, իսկ 2010 թ. մեր արշավախումբը հետախուզել է բնակավայրը:

2011 թ. օգոստոսին պ.գ.ք. Արսեն Բորոխյանի ղեկավարությամբ՝ մեր արշավախմբի կողմից իրականացվեցին Սոթք 2 բնակավայրի առաջին պեղումները: Նախ պատրաստվեց հուշարձանի տեղագրական քարտեզը, ապա արվեց գեոմագնետիկ հետազոտություն: Տեղում իրականացվեցին հնաբուսաբանական ուսումնասիրություններ. ի հայտ եկած 12 բուսատեսակները վերականգնում են սակավաթիվ բիոտներով բնորոշվող տափաստանային լանդշաֆտ (այս առումով գրեթե նույն պատկերն է, ինչպես այսօր): Բազմատեսակ հնակենդանաբանական նյութը հետազոտության ընթացքում է: Վանակատի և մետաղի նմուշները արդեն հետազոտվել են Մանհայմում: Արվել են 10 ռադիոածխածնային անալիզ:

Ինչ վերաբերում է բուն հնագիտական աշխատանքներին, ապա չորս պեղավայրերում ուսումնասիրվեց 130 մ² մակերեսով տարածք:

Հուշարձանի մշակութային շերտն առաջմ ունի մոտ 1,5 մ հաստություն: Որպես կանոն, պեղավայրերում տեսանելի է հետևյալ շերտագրական հաջորդականությունը. բարակ ճիմահող, քարախառն կամ շագանակագույն հողաշերտ, կավաշերտ, սպիտակա-մոխրագույն կավահող և մշակված ժայռ: Սրանք հիմնականում նաև ժամանակագրական ցուցիչներ են, երբ քարախառն հողաշերտը քարե իր կառույցներով բնորոշում է ՈՒԲ/ՎԵ-ը, կավաշերտը՝ ՎԲ-ը, սպիտակա-մոխրագույն կավահողը ժայռահորերում՝ ՄԲ-ը (բայց նաև ՎԲ-ը): Մինչ այժմ հնարավոր է խոսել յոթ բնակության շրջափուլերի մասին, որոնցից չորսը վկայված են մշակութային շերտերով, իսկ երեքը՝ առանձին մշակութային հատկանիշների առկայությամբ:

Փուլ I. Պղնձի դարը Սոթք 2-ում վկայված է Պեղավայր Գ-ում երկու ռադիոածխածնային տվյալներով, որոնցից մեկը վերաբերում է վաղ ՊԴ-ին, երկրորդը՝ ՊԴ-ՎԲ անցմանը: Վաղ ՊԴ առկայությունը չի հաստատվում հնագիտական համատեքստով, սակայն տրամաբանական է՝ շնորհիվ նմուշի դիրքի, մինչդեռ ուշ ՊԴ-ը տեսանելի է վաղ ՎԲ-ի համատեքստում (խեցեղեն, մետաղե միզակի ծայր՝ զուգահեռով Թեղուտում): Բացի այդ, Սոթք 2-ի վանակատե առարկաների նախնական վերլուծությունը առանձնացնում է տիպեր, որոնք նախաբրոնզեդարյան են (Բ. Գասպարյան):

Փուլ II. ՎԲ-ը վկայված է Պեղավայր Գ-ում և Դ-ում: Խոսքը գնում է կուրարաքսյան մշակութային բնորոշ դեղնա-սպիտակավուն կավաշերտի մասին: Մինչ այժմ հնարավոր է եղել փաստագրել այս շրջափուլին վերաբերող երկու հորիզոններ՝ վաղ (Պեղավայր Գ՝ Բ.ա. IV հազարամյակի երկրորդ կես) և ուշ (Պեղավայր Դ՝ Բ.ա. III հազարամյակի առաջին կես), որոնք հաստատվում են երկու ռադիոածխածնային տվյալներով:

Փուլ III. ՄԲ-ը վկայված է չգունագրոված խեցեղեն բեկորներով բոլոր պեղավայրերում և ժայռահորային սպիտակա-մոխրագույն կավահող լիցքով բնորոշվող շերտով Պեղավայր Ա, Բ, Դ-ում: Ռադիոածխածնային երեք տվյալներ խոսում են Սոթք 2-ում ՄԲ-ի, մասնավորապես միջին և ուշ փուլերի (Սևան-արցախյան մշակույթ) առկայության մասին (Բ.ա. մոտ 1750-1500 թթ.):

Փուլ IV. ՈՒԲ-ի առկայությունը Սոթք 2-ում անհայտ է հնագիտական և ռադիոածխածնային տվյալների հիման վրա: Մասնավորապես երկու ռադիոածխածնային նմուշ ցույց են տալիս, որ Սոթք 2-ում գործ ունենք ՄԲ-ՈՒԲ անցումային փուլի (Պեղավայր Ա) և վաղ ՈՒԲ-ի (Պեղավայր Դ) հետ:

Փուլ V. Վաղ երկաթը ներկայացված է խեցեղեն բեկորներով բոլոր պեղավայրերում և շագանակագույն հողաշերտով ու անկանոն-կլորավուն կացարաններով միայն Գ Պեղավայրում: Վաղ երկաթի գոյությունը բնակավայրում հաստատվում է երեք ռադիոածխածնային տվյալներով Պեղավայր Գ-ից, որոնք խոսում են Բ.ա. մոտ

¹ Stù` Biscione R., Hmayakyan S., Parmegiani N., The North-Eastern Frontier: Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin, I. The Southern Shores, Documenta Asiana VII, Roma, 2002, p. 251.

1100-800 թթ. մասին: Կարծում ենք, որ պաշտպանական պատի մնացորդները վերաբերում են այս փուլին, ինչը հաստատվում է ոչ միայն պաշտպանական համակարգի տիպով, այլ նաև Պեղավայր Գ-ի շերտագրական տվյալներով, որտեղ ամրոցի քարերը նույն մակարդակի վրա են ինչ Վե շերտը:

Փուլ VI. Ռադիոածխածնային տվյալները ցույց են տալիս, որ Սոթք 2 բնակավայրը կարող էր գոնե մասնակիորեն դադարեցնել իր գոյությունը Վե-ի վերջերին, իսկ Պեղավայր Գ-ի ածխաշերտը կարող էր վերաբերել ուրարտացիների ավերածություններին (ուրարտացիները Սոթքի կողմերում առաջին անգամ երևացին Ք.ա. VIII դ. կեսերին), որից հետո բնակավայրը կարող էր որոշ ժամանակաշրջանով լքվել, սակայն շուտով վերականգնվել: Պեղավայր Ա-ի ռադիոածխածնային տվյալներից մեկը մատնանշում է Ք.ա. մոտ 700-400 թթ., ինչը տեղավորվում է մեր տերմինաբանության ուշ երկաթ հասկացության սահմաններում (= ուշ Ուրարտու, հին Հայկական): Շերտագրական տվյալներ այս ժամանակահատվածի վերաբերյալ չկան: Միայն որոշ խեցեղեն բեկորներ կարող են վկայել նրա առկայության մասին:

Փուլ VII. Բոլոր պեղավայրերում հանդիպում են քիչ քանակության զարգացած միջնադարյան խեցեղեն բեկորներ, որոնք չեն առնչվում որևէ կառույցի հետ:

Սոթք 2-ի բազմաշերտությունը կարելի է բացատրել բնակավայրի դիրքով՝ ճանապարհի վրա: Գործառույթի տեսանկյունից, հավանաբար գործ ունենք մի պահակակետ-բնակավայրի հետ: Բնակավայրի բլրային ժայռափոր հարթ տարածությունը հիմնականում բնակեցվել է ՄԲ-ում, իսկ դեպի դարավանդներ տանող գոտին ՎԲ և ՈՒԲ/ՎԵ-ում:

Սոթք 2-ում վկայված են երեք տեսակի ճարտարապետական միջավայրեր.

1. Կավի ճարտարապետություն՝ բնորոշ ՎԲ-ին և վկայված Պեղավայրեր Գ և Դ-ում:

2. Ժայռի մշակում՝ վկայված բոլոր պեղավայրերում՝ ՎԲ (Գ) և ՄԲ (Ա, Բ, Դ):

3. Քարե ճարտարապետություն՝ բնորոշ ՈՒԲ/ՎԵ-ին (Գ, Դ):

Գտածոների հիմնական մասը վերաբերում է կուր-արաքսյան մշակութային հորիզոնին և ներկայացված է տիպիկ սև-փայլեցված խեցեղենով, ոսկրե և քարե գործիքներով, երկու մետաղե առարկաներով, կավե զանգվածեղ անիվով:

Ավելի սակավ են միջինբրոնզեդարյան, ՈՒԲ/ՎԵ և միջնադարյան խեցեղենի, ինչպես նաև քարե զարդերի գտածոները:

Քանի որ հայ հնագիտության պատմության ընթացքում հիմնականում պեղվել են դամբարանային համալիրներ, Սոթք 2 բնակավայրի պեղումները յուրահատուկ նշանակություն է ձեռք բերում: Այն առաջին և մինչ այժմ միակ բնակավայրային պեղումն է Սևանի ավազանում: Պեղումներից ձեռք բերված տվյալները ցույց են տալիս այն ներուժը, որն ունի այս փոքր, սակայն կարևոր հուշարձանը: Հուշարձանի տեղադրությունը դեպի Սոթքի անցում և ոսկու հանքեր տանող հստակ տեսանելի (առևտրական) ճանապարհի վրա ինքնըստինքյան խոսում է նրա գործառույթի մասին: Վաղերկաթեդարյան ամրոցի առկայության հանգամանքը լիովին համապատասխանում է պատմական համատեքստին. ուրարտացիները Սոթք 2-ի տարածաշրջանը հիշատակում են Արկուկինի անվամբ, որը հանդիսանում է Ուրուրի-Էթիունի (ուրարտ. «Ջրային Էթիունի») երկրի մի մասը՝ ոսկով հարուստ մի լեռան մոտ, որ կոչվում է Ուշկիանի (ուրարտ. «Ոսկու լեռ»), ինչը հանդիսանում է Սոթքի ոսկու հանքերի առաջին՝ սեպագրային հիշատակումը¹: Այս տեսանկյունից, շատ հավանական է թվում, որ Սոթք 2-ը որպես պահակակետ/դիտակետ կարևոր դեր է խաղացել ոսկու հանք տանող ճանապարհին ուրարտացիների էքսպանսիայից առաջ և հետո, ինչը, ի թիվս այլոց, ցույց են տալիս Սոթք 2-ի ՎԲ բնակավայրի գտածոները: Արդեն հիշված մետաղե առարկաները, յուրահատուկ կավե անիվը, կշռաքարը, վանակատի և

այլ նյութերի մշակման արհեստանոցները խոսում են այն տեսակետի օգտին, որ Սոթք 2-ը հանդիսացել է պահակակետ/դիտակետ և տնտեսական ու առևտրա-փոխանակային կարևոր կետ: Հուշարձանի հետագա պեղումները, միջմասնագիտական հետազոտությունների հետ մեկտեղ, կվերականգնեն այնպիսի մի հասարակության զարգացման առանձնահատկությունները, որոնք հասկանալի կարող են դառնալ միայն այդ հուշարձանի բնական յուրահատուկ պայմանների համատեքստում:

Арутюн Ванян

АРХЕОЛОГИЧЕСКИЕ РАБОТЫ В СОТКЕ

В 2010 году армяно-германская археологическая и геологическая экспедиция провела междисциплинарные исследования в районах добычи золота на территории Республики Армения. Совместная экспедиция была представлена археологами, геологами и археометристами из институтов геологии и археологии и этнографии Академии наук Армении, а также института преемственности и ранней истории (Университет Тюбингена), Центр археометрии (Мангейм), Институт геологических наук (Галле, Германия). Проект был реализован в рамках международного соглашения по сотрудничеству в области науки и культуры между правительством Республики Армения и Федеративной Республики Германия от 21.12.1995. Основной целью экспедиции было изучение золотых приисков и археологических контекстов, создание предпосылок для дальнейшей работы в будущем.

Harutyun Vanyan

ARCHAEOLOGICAL ACTIVITIES IN SOTK

During 2010 the Armenian-German archaeological and geological expedition conducted interdisciplinary surveys in and around the gold mining districts in the territory of the Republic of Armenia. The joint expedition was represented by the archaeologists, geologists and archaeometrists from the Institute of Geology and Institute of Archaeology and Ethnography of Armenian Academy of Sciences as well as Institute of Prehistory and Early History, University of Tübingen, Centre of Archaeometry, Mannheim, Institute of Geological Sciences, Halle, Germany. The project was realized in the frameworks of International agreement in cooperation in the spheres of science and culture between the government of Republic of Armenia and Federative Republic of Germany from 21.12.1995. The main purpose of expedition was to observe the gold mines and their archaeological context and create preconditions for further works in future.

¹ Պետրոսյան Ա., Սարգսյանի II անդրսևանյան երթուղու շուրջ, «Պատմա-քանասիրական հանդես», Երևան, 1984, ք. 2, էջ 178: